# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«23» փետրվարի 2024թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Զեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհժ**)

**1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային գնումների իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2024թ.-ի փետրվարի 23-ին, ժամը 11:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք աշխատանքների գնման գնի վերաբերյալ.**

Գնման ընթացակարգը կազմակերպվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց, որ գնման հայտով սահմանված է շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը.

| **Չափաբաժնի համարը** | **Չափաբաժնի անվանումը** | **Գնման հայտով սահմանված՝ աշխատանքների ձեռքբերման համար պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը (ՀՀ դրամ)** |
|---|---|---|
| 1 | Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատի նստավայրի՝ ք. Արտաշատ, Շահումյան 19 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ) | 26 975 560 |

**3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝**

| **Մասնակցի անվանումը (անունը)** | **Մասնակցի գործունեության հասցեն** |
|---|---|
| «Հոսիկար շին» ՍՊԸ | ՇԻՐԱԿ ՊԵՄԶԱՇԵՆ ՊԵՄԶԱՇԵՆ 2 Փ. 1 ՓԿՂ. 2 |
| «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | ՀՀ, Արարատի մարզ, գ. Ոստան, Մայիսյան 77 |

Ներկայացված հայտերը Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:

**4. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.**

Հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրի՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

**5. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.**

Հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

6. **Մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության նպատակով հանձնաժողովը որոշեց նիստը հետաձգել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. մարտի 05-ին՝ ժամը 11:00-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):**

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ______________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ ______________ Նորայր Աղամալյան

______________ Արմեն Ավետիսյան

______________ Տիգրան Ջեյնալյան

______________ Անդրանիկ Աբգարյան

______________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ______________ Գայանե Դադիվանյան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«05» մարտի 2024թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Ձեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

**1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

**1.1.** «Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (հայտի ապահովումը ներկայացվել է կանխիկ փողի ձևով, հայտում առկա է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակը):

1.2. «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը (հայտի ապահովումը ներկայացվել է բանկային երաշխիքի ձևով, հայտում առկա է բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը):

«ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա լիցենզիան և լիցենզիայի ներդիրները (լիցենզիայի և լիցենզիայի ներդիրների արտատպված (սկանավորված) տարբերակները) գնահատող հանձնաժողովի կողմից չեն քննարկվել, քանի որ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով չի սահմանվել լիցենզիա/ներդիր ներկայացնելու պահանջ:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի (հայտում առկա փաստաթղթերի)՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

**2.1. «Հոսիկար շին» ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը (Հավելված 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա ծավալաթերթը (ծավալաթերթ-նախահաշիվը) (Հավելված 2.1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- հիմք ընդունելով 16.02.2024թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/12-1/2884-2024 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը CLIENT-TREASURY ծրագրային համակարգով առցանց ստուգել է «Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը: CLIENT-TREASURY ծրագրային համակարգում առկա է «Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովման նպատակով գանձապետական թիվ 900008000466 հաշվին վճարված գումարի վճարումը հավաստող տեղեկատվությունը:

«Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին,

- ներկայացված հայտում առկա փաստաթղթերը հաստատված են լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, հայտով ներկայացված է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ՝ լիազորագիր, սակայն լիազորագրով հիշյալ անձը լիազորվել է էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրել «Հոսիկար շին» ՍՊԸ-ի կողմից մասնակցվող բոլոր մրցույթների հայտերի հավելվածներում և կից փաստաթղթերում, այն դեպքում, երբ քննարկվող գնման գործընթացը կազմակերպվել է ոչ թե մրցույթի, այլ գնանշման հարցման ընթացակարգով, ինչպես նաև լիազորված անձի տվյալներում նշված չէ անձնագրի սերիան, անձնագրի համարի թվանշանների քանակը գերազանցում է ՀՀ կառավարության 1998թ. դեկտեմբերի 25-ի N 821 որոշմամբ անձնագրերի համարակալման համար նախատեսված թվանշանների քանակին:

**2.2. «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ**

- ներկայացված հայտում առկա գնանշման հարցմանը մասնակցելու դիմում հայտարարությունը (Հավելված N 1) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա գնային առաջարկը (Հավելված 2) կազմված է հրավերով սահմանված պայմաններին համապատասխան,

- ներկայացված հայտում առկա ծավալաթերթ-նախահաշիվը (այսուհետ՝ Ծավալաթերթ-նախահաշիվ) կազմված չէ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, մասնավորապես.

- հրավերի պահանջների համաձայն ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացվում է **Հավելված 2.1**-ի համաձայն՝ հետևյալ վերնագրով՝ **«Հավելված 2.1 «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնանշման հարցման հրավերի»**, այն դեպքում, երբ մասնակցի հայտով Ծավալաթերթ-նախահաշվը ներկայացվել է **Հավելված N 1-ի** համաձայն՝ հետևյալ վերնագրով՝ **«Հավելված N 1 «  »  20  թ. կնքված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով պայմանագրի»**,
- Ծավալաթերթ-նախահաշվի «Միավորի արժեքը» և «Ընդամենը» սյունակներում նշված են նաև «/ՀՀ դրամ/» բառերը, այն դեպքում, երբ մասնակցի կողմից Ծավալաթերթ-նախահաշիվը ներկայացվել է «**հազար դրամ**» հաշվարկային ձևով,
- Ծավալաթերթ-նախահաշվում բացակայում են հրավերով նախատեսված՝ **«Հիմնավորումը»** սյունակը և **«Վերադիր ծախսեր (13.3%)»**, **«Ընդամենը»**, **«Շահույթ»**, **«Ընդամենը»**, **«Փոքր ծավալի շին աշխատանք (2%)»**, **«Ընդամենը»**, **«Տարածքի մաքրման և գոյացած (ոչ ընթացիկ) աղբի տեղափոխման աշխատանքների ծախսեր (0.15%)»**, **«Ընդամենը»**, **«Չնախատեսված ծախսեր (3%)»**, **«Ընդամենը»** տողերը (համապատասխան տեղեկատվությամբ),

- «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովումը համապատասխանում է հրավերով սահմանված պայմաններին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**3. Մասնակիցների առաջարկած գներն են.**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը (անունը) | Չափաբաժնի համարը և անվանումը | | |
|---|---|---|---|---|
| | | 1. Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքներ (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատի նստավայրի՝ ք. Արտաշատ, Շահումյան 19 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ) | | |
| | | Առաջարկված գինը (ՀՀ դրամ) | | |
| | | Արժեք | ԱԱՀ | Ընդհանուր գինը |
| 1 | «Հոսիկար շին» ՍՊԸ | 17 869 970 | 3 573 994 | **21 443 964** |
| 2 | «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | 19 485 000 | 3 897 000 | **23 382 000** |

**4. Հանձնաժողովը որոշեց.**

- նիստը կասեցնել և հաջորդ նիստը հրավիրել 2024թ. մարտի 07-ին, ժամը 11:30-ին, Դատական դեպարտամենտի կենտրոնական մարմնի վարչական շենքում (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի, ինչպես նաև «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.9-րդ կետի պահանջներով՝ **«Հոսիկար շին» ՍՊԸ-ի և «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի** հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել հիշյալ մասնակիցներին՝ առաջարկելով մինչև սույն թվականի **մարտի 06-ը ներառյալ** շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Արթուր Ասատրյան

Անդամներ՝ Նորայր Աղամալյան

Արմեն Ավետիսյան

Տիգրան Ջեյնալյան

Անդրանիկ Աբգարյան

Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ Գայանե Դադիվանյան

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

Դատական դեպարտամենտի կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«07» մարտի 2024թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Արթուր Ասատրյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ **ԳՊ/ԳԱՊ**)

*հանձնաժողովի անդամներ՝*

**Նորայր Աղամալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Արմեն Ավետիսյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Տիգրան Ջեյնալյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ գնահատման աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**)

**Անդրանիկ Աբգարյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

**Վարդան Կարապետյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի ճարտարագետ - շինարար (գնման պատասխանատու/ բացման աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**)

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Գայանե Դադիվանյան՝** Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (գնման պատասխանատու/ ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/ՄԻՄ**)

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում «Հոսիկար շին» ՍՊԸ-ի և «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների շտկման և հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ.**

«Հոսիկար շին» ՍՊԸ-ն և «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել են հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

«Հոսիկար շին» ՍՊԸ-ի և «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

2. **Տվյալներ՝ ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ.**

Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.

- **ընտրված մասնակից ճանաչել (հայտարարել) «Հոսիկար շին» ՍՊԸ-ին,**

*- ընտրված չճանաչված մասնակից հայտարարել «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ-ին:*

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 6, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ____________________ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

____________________ Նորայր Աղամալյան

____________________ Արմեն Ավետիսյան

____________________ Տիգրան Ջեյնալյան

____________________ Անդրանիկ Աբգարյան

____________________ Վարդան Կարապետյան

Քարտուղար՝ ____________________ Գայանե Դադիվանյան

**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02»**

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը.

Գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մարտի 07-ի թիվ 4 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա են հանդիսանում՝ **Շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Արտաշատի նստավայրի՝ ք. Արտաշատ, Շահումյան 19 հասցեում տեղակայված վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքները):**

| **Հ/Հ** | **Մասնակցի անվանումը** | **Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր** /համապատասխանելու դեպքում նշել “X”/ | **Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր** /չհամապատասխանելու դեպքում նշել “X”/ | **Անհամապատասխանության համառոտ նկարագրույթուն** |
|---|---|---|---|---|
| 1 | «Հոսիկար շին» ՍՊԸ | X | | |
| 2 | «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | X | | |

| **Մասնակիցների զբաղեցրած տեղերը** | **Մասնակցի անվանումը** | **Ընտրված մասնակից** /ընտրված մասնակցի համար նշել “X”/ | **Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/** |
|---|---|---|---|
| 1 | «Հոսիկար շին» ՍՊԸ | X | 17 869 970 |
| 2 | «ՍՈԼԻԴ-ՔՈՆՍԹՐԱՔՇՆ» ՍՊԸ | | 19 485 000 |

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-24/02» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-783**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am:**

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**